ԺԲ–իս օր Կիրակի. հարսնիք Մինասին. ի Սուրբ Նիկողոս պսակեցաք։

ԺԹ–իս օր Կիրակի. Յիսնակի բարեկենդան։ Օրս Զաքրեյ Ղալֆան մատաղ արար և զԱռաջնորդն ի մեր ժամս ձայնեաց։ Եւ օրս լու եղև թէ Կաթողիկոսն Սըսայ վաղջանեալ և եդեալ են ի տեղի նորա զԹորոս վարդապետն Սեբաստացի։

ԻԶ–իս օր Կիրակի. զՍուրբ Գէորքայ Կէտուկ Յովանէսն ձեռնադրեաց տէրտէր. և օրս Կէպուլի եղբօրորդոյ Սահակի հարսնիք գնացի, և անդ էր Տէր Խաչատուրն մեր, ի մօտ իւր նստեցոյց պատուով։

Դեկտեմբեր ամիս օր Ուրբաթ։

Գ–իս Կիրակի. Սուրբ Նիկողոսու Տէր Աւետիքի որդոյ հարսնիքն գնացի և զիշերն ի Սուրբ Նիկողոս գացի, ննջելով անդ ի տան։

Բշի օրս (4 Դեկտ.) ի նոր տուն եկաք և զվարի տունն ևս ձեռ արկաք շինել՝ Ա. Բ տուն։

Գշի (5 Դեկտ.). մեր Աննան մեռաւ՝ արծաթագին Մղտեսուն. և օրս յՈւսկիւտարու Տէր Աստուածատուրն վաղջանեցաւ։

Շաբաթի օրս (9 Դեկտ.) Յղութիւն Աննայի զկոյսն Մարիամ։ Օրս Սուրբ Գէորքայ Տէր Սարգիսն վաղջանեցաւ և մեր Պակէ փոքր տղան մեռաւ։

Կիրակի Ժ–իս՝ մեր Տէր Ազարիայի տղան մեռաւ։ Բարեկենդան Սուրբ Յակոբի։

ԺԵ–իս օր Ուրբաթ. Եղիազար վարդապետն եկն յՈւսկիւտարն, և լըւեալ մեր անդ գնացաք ամենայն բարեկամօք. մինչ յերիկուն գային որք լըւանն, և անդ կացաք զգիշերն և ելեալ գնացաք ի բաղանիս և անտի ի ժամ (16 Դեկտ.) պաշտօն արարեալ և մատաղ արարեալ Վարդապետին։ Կացաք օրս և մօտ յերեկո-